ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «02» հուլիս 2024 թ.

ՀՐԱՄԱՆ №186-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 140-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանով ստեղծված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի 2024 թվականի հունիսի 27-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 3-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկերը հաստատելու մասին» N 140-Ա/Ք հրամանի հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

1) N 1 հավելվածում գիտական միջոցառումների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

7	Հայ -գերմանական գիտության օր	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	«Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանային սինթեզ» XVI միջազգային սիմպոզիում	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
9	Ալեքսեյ Ստարոբինսկու հիշատակին նվիրված կոնֆերանս «Փոփոխվող Տիեզերք՝ տեսություն և դիտումներ»	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
10	«Հադրոնային կառուցվածքի և սպեկտրոսկոպիայի 20-րդ միջազգային գիտաժողով» և «Կորելյացիաները պարտոնային և հադրոնային փոխազդեցություններում» 5-րդ համատեղ գիտաժողով	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

11	«Հանրահաշիվ, տրամաբանություն և դրանց կիրառություններ» միջազգային գիտաժողով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
12	Ճարտարապետական ժառանգություն և արդի ճարտարապետություն	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
13	«Սիմետրիայի մեթոդները ֆիզիկայում» XIX միջազգային գիտական միջոցառում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
14	«Քիմիայի մոլ» (CheM-2024) գիտության դպրոց	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
15	«Փոփոխվող կրթություն. համընդհանուր ներառականության արդի մարտահրավերները» միջազգային գիտաժողով	«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
16	Գագիկ Գինոսյանի հիշատակին նվիրված գիտաժողով «Պարի բանահյուսական և ծիսական ենթատեքստը»	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
17	Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը. տասնամյակների անավարտ պայքարի հիշողութային, քաղաքական և աշխարհաքաղաքական ուղենիշները	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
18	«Եվրասիական խաչմերուկների աշխարհաքաղաքականություն. փոխակերպումներ, մարտահրավերներ և զարգացման ուղիներ» միջազգային գիտաժողով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
19	Ամպրոպներ և տարրական մասնիկների արագացում	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
20	Բարդության էվոլյուցիա և վիճակագրական ֆիզիկա	«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

2) N 2 հավելվածում երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

6	«Օպտիկայի և ֆոտոնիկայի ժամանակակից կիրառությունները» 1-ին միջազգային քոլեջ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
7	Երիտասարդական միջազգային աշնանային դպրոց «Շրջակա միջավայրի գիտություններ. կենսոլորտային տարածքը որպես կայուն զարգացման գերազանցության մոդել»	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ

8	Գ.Տեփանոսյանի հիշատակին նվիրված 3-րդ երիտասարդական ամառային դպրոց «Շրջակա միջավայրի բազմասենսորային հեռազննում»	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
9	ՃՇՀԱՀ «Երիտասարդ հետազոտողների միավորման» ամառային դպրոց	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
10	«Ֆիզիկան և մենք» ամառային ճամբար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ